



**« ՇԻՆ -ԿՈՄՖՈՐՏ » ՍՊԸ**  
**« ШИН-КОМФОРТ » ООО**  
**« SHIN-KOMFORT » LLC**

---

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Ազատության 35/33 հեն. +374 93 81 03 51

РА Марз Гегаркуник, г. Гавар Азатутян 35/33 . тел +374 93 81 03 51

RA Marz Gegharkunik, c.Gavar Azatytyan 35/33 tel. +374 99 81 03 51 mail: vigenpampisho@gmail.com

---

**Մինչև 2026 թ.-ը կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող դպրոցների  
ծրագրում ընդգրկված**

**Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրի կրթահամալիրի  
կառուցման**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
(լրամշակված)**

**Նախագծող՝ Շին-Կոմֆորտ ՍՊԸ**  
Գործադիր տնօրեն Վ. Աղդալյան

**Ձեռնարկող ՌաֆՕջախի ՍՊԸ**  
Գործադիր տնօրեն Ա. Ասրյան

**Հաշվետվության կազմման պատասխանատու՝ Գ. Աղդալյան**

Ընդհանուր տեղեկատվություն.....	4
2. Հավելվածներ .....	4
3. Հապավումներ. ....	4
4. . ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ կազմման իրավական հիմքերը	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ .....	9
6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը.....	9
7. ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը .....	10
8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐԸ.....	10
8.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր .....	10
8.2. Ծրջակա միջավայրի բնութագրերը.....	13
8.2.1. Աշխարհագրական դիրքը և կլիման .....	13
8.2.2 Օդային ավազան. ....	15
8.2.3. Հողային ռեսուրսներ. ....	16
8. 2.4. Ջրային ռեսուրսներ .....	17
8.2.5. Կենսաբազմազանություն.....	18
8. 2.6. Հատուկ պահպանվող տարածքներ .....	19
8.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ:.....	20
8.2.8. Բնության հուշարձաններ.....	21
8.2.9. Սոցիալ-տնտեսական բնութագիրը.....	21
9.1. Քանդման փուլ.....	23
9.2 Ծինարարության փուլ. ....	23
10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր .....	27
11. Ծրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.....	32
11.1 Օդային ավազան. ....	32
11.2 Հողային ռեսուրսներ. ....	33
11.3 Ջրային ռեսուրսներ. ....	34
11.4 Կենսաբազմազանություն. ....	35
11.5 Թափոններ.....	35
11.6 Աղմուկ և թրթռում. ....	37
11.7 Արտակարգ իրավիճակներ.....	39
11. 8 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. ....	41

11.9 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.....	43
11.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. ....	44
11.11 Սոցիալական. ....	45
11.12 Լանդշաֆտ. ....	45
11.13 Բարեկարգում և Կանաչապատում.....	46
12. Մոնիթորինգ.....	47
13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան .....	48
14. Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիթորինգ.....	55
15.Բողոքների ընթացակարգ .....	60
Գրականություն .....	61
Հավելված 1, Մեփականության վկայական.....	62
Հավելված 2 Ճարտարապետահատակագծային առաջադրանք .....	64
Հավելված 3, Տեղեկանք շինադրի հեռացման.....	66
Հավելված 4, Ավազանու որոշում .....	67
Հավելված 5, Արձանագրություն և մասնակիցների ցանկ .....	68
Հավելված 6 Կադաստրային քարտեզ.....	73
Հավելված 7 Շինհրապարակի գլխավոր հատակագծեր.....	75
Հավելված 8. Իրավիճակային հատակագիծ.....	78
Հավելված 9. Գլխավոր հատակագիծ.....	79
Հավելված 10. Պետական տուրքի անդորրագիր .....	80

## Ընդհանուր տեղեկատվություն.

Ծրագրի անվանում	«Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցում
Պատվիրատու	Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամ
Նախագծող	Շին-Կոմֆորտ ՍՊԸ
Նախագծողի իրավաբանական հասցեն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Ազատության 35/33
Նախագծողի փաստացի գործունեության տարածք	ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայր
Հեռախոս, էլեկտրոնային փոստ	(093)8103 51, vigenpampisho@gmail.com
Ձեռնարկող Կապալառու	Ռեաֆ-Օջախ ՍՊԸ
կազմակերպություն	
Կրթահամալիրի հզորություն	200+80
Հաշվետվության կազմման խորհրդատու	Գ. Աղդալյան

## 2. Հավելվածներ

- [Հավելված 1.](#) Տարածքի սեփականության իրավունքի վկայական
- [Հավելված 2.](#) Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը պայմաններ
- [Հավելված 3](#) Տեղեկանք շինադրի հեռացման
- [Հավելված 4](#) Ավագանու որոշում
- [Հավելված 5](#) Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ
- [Հավելված 6](#) Կադաստրի քարտեզ
- [Հավելված 7.](#) Շին. Հրապարակի գլխավոր հատակագիծ
- [Հավելված 8](#) Իրադրության հատակագիծ
- [Հավելված 9](#) Գլխավոր հատակագիծ
- [Հավելված 10.](#) Պետական տուրքի անդորրագիրը

## 3. Հապավումներ.

- ՇՄԱԳ-Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ՀՏՁՀ- Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամ
- ՀՀՇՆ- Հայաստանի Հանրապետության Շինարարական Կլիմայաբանություն
- ՇՄՆ-Շրջակա միջավայրի նախարարություն

#### **4. . ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԳՂԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԳՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՄՔԵՐԸ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.- ի ՀՕ-110 ՀՀ Օրենքում՝ 2023թ. մայիսի 3-ի փոփոխություններ կատարելու մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ սահմանված դրույթներին համապատասխան: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք կարող են ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 5 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները: «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ. ) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ. ) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Մահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն

վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, 6 կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպատիրակական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով 7 քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

## **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008 թ. N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 Թվականի Նոյեմբերի 19-Ի N 1325-Ն Որոշման Մեջ Փոփոխություն Կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ՀՀ կառավարության 8 հոկտեմբերի 2009 թվականի «Կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների համար կոյուղաջրերի տեղային մաքրման կայանների պարտադիր տեղադրման նորմերը հաստատելու մասին» N 1142-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 394-Ն որոշում (փոփ. 21 մարտի 2024 թվականի):

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչեվ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու եվ ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» 30 նոյեմբերի 2023 թվականի N 2093-Ն որոշման մասին օրենքը, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները, ինչպես նաև Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.mnp.am/> ինտերնետային էջում)։

### **Միջազգային համաձայնագրեր**

«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)

- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)

- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել): Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:  
«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ.

Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:  
Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա, և Բ: Ըստ Օրենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ<sup>2</sup>-ը (դպրոցի նոր կառուցվող մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 2110 մ<sup>2</sup>, ընդհանուր մակերեսը կազմում է 0.7938 հա, որից կանաչապատման մակերեսը կազմում է 2358 մ<sup>2</sup> մակերեսն է:



Համաձայն Օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրությաին փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

Սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցման համար, որի նախագծային տեղակայումն իրականացվել է «Շին-Կոմֆորտ» ՍՊ ընկերության կողմից:

Կրթահամալիրի կառուցումն իրականացվելու է ՀՀ պետական բյուջետային միջոցների հաշվին՝ պետական կարիքների համար:

## **5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ**

### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Ըստ "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" օրենքի փորձաքննության ենթակա են օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 6-9-րդ մասերով, ինչպես նաև օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ նախատեսվող գործունեության տեսակների ՇՄԱԳ հաշվետվությունները և նախագծային փաստաթղթերը:

## **6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը**

Նախատեսվող գործունեության նախագծման աշխատանքներն իրականացվել է Շին-Կոմֆորտ ՍՊԸ կողմից որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Ազատության 35/33: Կրթահամալիրի կառուցումը նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Գարգառ բնակավայրի գոյություն ունեցող դպրոցից մոտ 100 մ հեռավորության վրա՝ «Մինչեվ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում, ՀՀ կառավարության 394-Ն որոշման համաձայն: Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով դպրոցի նոր շենք: Ծրագրի իրականացնող է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ)՝ ՀՀ կառավարության պետական բյուջեի միջոցներով: Կապալառու կազմակերպությունն է Ռաֆօջախ ՍՊԸ:

## 7. ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը

Նախատեսվող դպրոցի կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերը,
- Նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- դպրոցի կառուցման գլխավոր հատակագիծը ([հավելված 9](#))
- տեղամասի ինժեներատեխնիկական հետազոտությունների հաշվետվությունը՝ կատարված Գեոզոն ՍՊԸ-ի կողմից,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայականը՝ [Հավելված 1](#)
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ հավելված 2:

## 8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

### 8.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

Դպրոցի տարածքն իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք, որն ունի պարզ երկրաչափական հորինվածք: Դպրոցն ապահովված է կադաստրային փաստաթղթերով, որոնք ունեն լրամշակման կարիք և կտրվեն առաջիկայում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է հավելված 1-ում): ուսումնասիրվող տարածքն գտնվում է Լոռվա սարահարթում, որը շրջափակված է հյուսիս-արևելքից՝ Վիրահայոց լեռներով, որի ամենաբարձր լեռը Լեջանն է, արևմուտքից՝ Ջավախքի լեռնավահանով, հարավից՝ Բագումի լեռնաշղթայով: Ուսումնասիրվող տեղամասով է անցնում Ձորագետը: Մակերեսը հարթ է: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 1401,5- 1405,5 մետրերի սահմաններում:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի, նախագծվող դպրոցը կառուցվելու է բնակավայրի դպրոցից մոտ 100 մ հեռավորության վրա: Հարակից տարածքում է մանկապարտեզի շենք, որը ըստ տեխնիկական առաջադրանքի քանդվելու է՝ բարեկարգման նպատակներով:

Նոր իրականացվող դպրոցը նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը կապահովի լսարանների գերակշիռ մասին հարավային կողմնորոշում: Նախատեսվում է ունենալ բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Համաձայն էսքիզային նախագծի դպրոցը երկհարկանի է: Կառուցվելու է նաև 2 հարկանի մանկապարտեզ՝ 2 խմբի համար՝ 20 հոգանոց:

Առկա է նկուղային հարկ, որի ընդհանուր մակերեսը կազմում է 440.64 մ<sup>2</sup>:

Շենքն իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և

երկհարկանի մանկապարտեզից:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճների մուտքերի մոտ նախատեսված են թեքահաթակներ: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հեգու համար, մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերն են՝ 24.7\*18.0 սմ:

Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Երկրորդ հարկում դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ժողովատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:

Նկուղային հարկը 21.6x20.4 մ չափեր է ունենալու, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան:

Նկուղային հարկը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքստոց, որտեղ տանող աստիճանը հագեցած է աստիճանային ամբարձիչով՝ հաշմանդամների համար: Բոլոր հարկերն իրար հետ կապված են և ունեն հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար: Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօդային միջոցառումների համար: Մանկապարտեզը նախագծված է 2 հարկից՝ 2 խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղակայված են նաև հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, երկրորդ հարկում նաև հանդիսությունների սրահ, վարիչի և բժշկի սենյակ:

Առաջին և երկրորդ հարկերի դասասենյակներ և մակերեսները

№	Սենյակի անվանումը НАИМЕНОВАНИЕ ПОМЕЩЕНИЙ	Սենյակի մակերեսը Площадь м²
1	Առաջին հարկ - ԿՈՒՈՒՄ ПЕРВЫЙ ЭТАЖ - ШКОЛА	3
1	ԿԱՆՈՒՄԻՆԻ ТАМБУР	5.04
2	ՊԵՐՄԵՆԱԿԻ СТОРОЖЕВОЙ ПОСТ	6.70
3	ԿԱՆՈՒՄԻՆ ВЕСТИБУЛЬ	46.90
1.4	ՔԵՐԱՍԻՆԻ РЕКРЕАЦИЯ	179.85 (179.85+61.20)
5	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	42.65
5	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	42.65
6	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	39.56
7	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	42.23
8	ԳՐԱԳԱՐԱՆԻ ԿԱԲԻՆԵՏ ԽԻՄԻԱ - ԲԻՈԼՈԳԻԱ	41.71
9	ՕՍԿԻՆԻ ՍԵՆՅԱԿ ԼԱՅՈՒՆՏՈՒՍԿԱՅԱ	10.13
10	ՕՍԿԻՆԻ ՍԵՆՅԱԿ ԼԱՅՈՒՆՏՈՒՍԿԱՅԱ	10.51
11	ԶԻՔՐՈՒՄ ԲԱ ԿԱՐԿՆԵՐԱՐՈՒՄՆԵՐՆԵՐ ԿԱԲԻՆԵՏ ԿԱԲԻՆԵՏ ԿՈՄԻՏԵ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ	41.82
21	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	35.84
12	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	46.94
13	ՊԵՐՄԵՆԱԿԻ ՏՐՊԵՆՆԱԿ ՍԵՆՅԱԿ	8.63
14	ՏԻՐՈՒՄԻՆԻ ԿԱԲԻՆԵՏ ԴԻՐԵԿՏՈՐԱ	17.39
15	ԲԵՐԻՆ ԿԱԲԻՆԵՏ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	11.25
16	ՍՊՈՐՏԻ ՍԵՆՅԱԿ ԿՈՄԻՏԱ ԿԻՐԿՈՒՄ	6.39
17	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՐԱԶՎԵՐԱՅԱԿԱ ԿԱՐԿՈՒՄՈՒՄ Ս ԵՎ ՍԱՆՅՈՒՄ ԻՆ ԴՎԵՍԻՅԻ	15.56
18	ՍՏԱՆԿԱՆԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՐԱԶՎԵՐԱՅԱԿԱ ԿԱՐԿՈՒՄՈՒՄ Ս ԵՎ ՍԱՆՅՈՒՄ ԻՆ ԴՎԵՍԻՅԻ	15.74
19	ԻՄՍԵՆՏԻ ԿՈՐԻԴՈՐ	13.87
20	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	3.00
21	ՍՊՈՐՏԱՆԻ ՏՊՈՐՏԱԼԱ	437.04
22	ԻՄՍԵՆՏԻՆԻ ԿԱԲԻՆԵՏ ՏՈՐԿՈՒՄՈՒՄՆԵՐՆԵՐ ԿԱԲԻՆԵՏ	12.47
23	ՍՊՈՐՏԱՆԻՆԻ ԿԱԲԻՆԵՏ ԱԿՏՈՎԱՅԻ ՅԱԼ	142.88
24	ՏՐԱ ՍԵՆՅԱ	47.27
25	ՕՍԿԻՆԻ ՍԵՆՅԱԿ ՍՈՒՍԿՈՑԻ ՍԵՆՅԱԿ	10.68 10.69
26	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	9.85
27	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	9.85
28	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	3.67
29	ՏՐԱՆՏԻ ԵՎԻԵՏ	87.23
30	ԿՈՒՈՒՄ ԿՈՒՈՒՄ	24.31
31	ԲԵՆԻՍԵՆՏԻՆԻ ՍԵՆՅԱԿ ՅԻՐՏՈՒՄՈՒՄՆԵՐՆԵՐ	5.29
32	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	1.95
33	ՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	4.91
68	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿՈՐԻԴՈՐ	3.59
69	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	35.01
70	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	12.19
71	ԲԵՐԻՆ ԿԱԲԻՆԵՏ ԿԱԲԻՆԵՏ ԶԱՅԱԿՈՒՄՈՒՄՆԵՐՆԵՐ	12.01
72	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	12.77
73	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	10.58
74	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿՈՒՈՒՄ	43.39
75	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍՏԱՆԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԱ	38.28
76	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿՈՒՈՒՄ - ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿՈՒՈՒՄ - ՍԵՐՎԻՍՈՒՄՈՒՄ	7.52
77	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	1.98
78	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	10.71
79	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ	1.94
80	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ	12.88
81	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	10.58
82	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	39.55
83	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍՏԱՆԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԱ	38.27
84	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿՈՒՈՒՄ - ՍԵՐՎԻՍՈՒՄՈՒՄ	6.86

1	2	3
	ԵՐԿՐՈՐԻ ՀԱՐԿ - ԿՈՒՈՒՄ ВТОРОЙ ЭТАЖ - ШКОЛА	3
34	ՔԵՐԱՍԻՆԻ + ԷՎԱԿԱՍԻՈՆՆԻ ՍԵՆՅԱԿ РЕКРЕАЦИЯ + ЭВАКУАЦИОННЫЙ КОРИДОР	179.54+25.00
35	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	35.84
36	ՍՊՈՐՏԱՆԻ ԲԱ ՍՊՈՐՏԱՆԻՆԻ ՅԱՐՄԱՆ - ՍԵՆՅԱԿ	43.74
37	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	2.96
38	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	2.88
38	ՍԵՆՅԱԿ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ	4.41
39	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	8.32
40	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	9.76
41	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	3.67
42	ՍՊՈՐՏԱՆԻՆԻ ՏՊՈՐՏԱԼԱ ՏՐԻԲՈՒՆԱ	39.13
43	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	51.57
44	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	50.49
44	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	49.59
45	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	47.32
46	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	42.60
47	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	41.17
48	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	41.74
49	ՊԵՐՄԵՆԱԿԻ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	41.82
50	ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	40.63
51	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	41.20
52	ՅԵՐԱՐ ԿԱԲԻՆԵՏ ԿԼԱՍՏՈՑԻ ՍԵՆՅԱԿ	3.50
53	ԿԱԲԻՆԵՏ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԿԱԲԻՆԵՏ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ	35.84
	ԵՐԿՐՈՐԻ ՀԱՐԿ - ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ВТОРОЙ ЭТАЖ - ДЕТСАД	3
85	ՉՈՒՄ ՍԵՆՅԱԿ	9.00
86	ԻՄՍԵՆՏԻ ԿՈՐԻԴՈՐ	23.94
87	ՍՊՈՐՏԱՆԻՆԻ ԿԱԲԻՆԵՏ ԱԿՏՈՎԱՅԻ ՅԱԼ	31.27
88	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	12.77
89	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	10.58
90	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	43.40
91	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍՏԱՆԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԱ	38.28
92	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿՈՒՈՒՄ - ՍԵՐՎԻՍՈՒՄՈՒՄ	7.51
93	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	12.88
94	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	10.58
95	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	39.41
96	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՍՏԱՆԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԱ	38.27
97	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ԿԱԲԻՆԵՏ ԵՐԱՊԱ	6.86
98	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	11.96
99	ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ՍԱՆՏԻՄԵՆՏԻ ՎԵՐԱՍԵՆՅԱԿ	1.98

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն նորմերին համապատասխան՝ Հայնախագիծ ԲԲԸ-ի կողմից, Շին-Կոմֆորտ ընկերությունը իրականացնում է տեղակայում: Շինանյութերը մատակարարվելու են սերտիֆիկացված ընկերություններից՝ սանիտարական և էկոլոգիական նորմերին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ, համաձայնեցվելու է համայնքի հետ:

Գործունեությունն իրականացվում է <<Մինչեվ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ>> ծրագրի շրջանակներում, կառուցվելու է 200 աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոցի և 80 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի կառուցում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

**Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.**

- Հողատարածքի մակերեսը 0,7938 հա
- Բարեկարգման մակերեսը 5828,00 մ<sup>2</sup>
- Կանաչապատման մակերեսը 2358,00 մ<sup>2</sup>
- Ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշներ
- Կառուցապատման մակերես 2110,00 մ<sup>2</sup>
- Առկա շինությունների քանդման մակերեսը 222,00 մ<sup>2</sup>
- Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 502մ<sup>2</sup>

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04-2020թ.-ի տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

Նախատեսվող գործունեության տարածքը նախկին դպրոցի տարածքն է: Տարածքը պարսպապատված է, տարածքի փաստացի մակերեսը 0.79 հա: Կից գտնվում են՝ ներհամայնքային նշանակության ճանապարհ, կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցողիներ: Հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, հողամասեր և այլ

տարածքներ:

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները:

### **Ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ**

2024թ. հուլիս ամսին «Գեոգոն» ՍՊԸ-ի կողմից կատարվել են նախատեսվող գործունեության տարածքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների գնահատման աշխատանքներ: Հորատումները կատարվել են ՄԴԵ-1BC հաստոցով, մեխանիկական չոր եղանակով պտուտակաձև սյունակային d=132մմ, d=112մմ, d=93մմ փորվել են 5 հորատանցքեր՝ 4 հորատանցքեր՝ յուրաքանչյուրը 8,0 գծամետր խորությամբ և մեկ հորատանցք 12 մետր խորությամբ, ընդհանուր 44 գծամետր խորությամբ ծավալով: Հորատանցքերի հիման վրա կազմվել են ինժեներաերկրաբանական կտրվածքներ, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Հորատանցքերի արդյունքները թույլ են տալիս շերտերի նկարագրությունը տալ 8 և 12,0 մետր խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի): Մակերեսը հարթ է: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 1401,5-1405,5 մետրերի սահմաններում:

**Հիդրոերկրաբանական տեսակետից** տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 2,2-2,7 մետր խորության հորիզոնների վրա:

**Շրջանի սեյսմիկ պայմանները** Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max} = 0.4g$ :

**Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

**Հողաբուսական շերտը, լիցքը, կավային գրունտները, ավազային-խճային գրունտները:** Քանի որ ուսումնասիրվող տարածքում գրունտները տեղադրված են տարբեր խորություններում, ուստի երկրաբանալիթոլոգիական կտրվածքը տրվում է վերնից-ներքև 3 շերտերով:

**Շերտ1** Հողաբուսական շերտ (ավազակավ, տարբեր բույսերի արմատներ, կոպիճ, շինարարական թափոններ): Շերտի անցած հզորությունը 2,0-4,0 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 8.2) II կարգ է:

**Շերտ2(alQ4)** Ավազակավ պինդ թանձրության: Գրունտը խոնավ է: Շերտի անցած հզորությունը 1,4 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 33.4) III կարգ է:

**Շերտ3(alQ4)** Կոպճախճավազային, գրունտ ավազային լցիչով: Շերտի անցած հզորությունը 2,8-8,6 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 5.3) III կարգ է:

## **8.2. Շրջակա միջավայրի բնութագրերը**

### **8.2.1. Աշխարհագրական դիրքը և կլիման**

Կառուցվող դպրոցը գտնվում է ՀՀ Լոռու մարզում: Զբաղեցնում է պատմական Հայաստանի

Գուգարաց նահանգի արևելյան հատվածն ու Այրարատ նահանգի Նիգ գավառի հյուսիսային տիրույթները:

Լոռու մարզն ունի ցայտուն արտահայտված բնական սահմաններ: Այն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանն ամբողջությամբ և հիմնականում ունի լեռնային ռելիեֆ՝ բարձրադիր լեռներ, անդնդախոր, երբեմն սուր կտրվածքով կիրճեր: Նրա տարածքում են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց և Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Լոռու, Փամբակի զոգավորությունները և Լոռվա ձորը: Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից մինչև 1800 մետր բարձրության վրա:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գարգառ բնակավայրի տարածքում, ուստի բերում ենք տեղանքին համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է տաք խոնավ ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 17,5°C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 74% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և չափավոր ցուրտ թույլ քամիներով ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -3,6°C է: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Ստեփանավանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

**Օդի ջերմաստիճան**

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավել լազույն. °C
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Ստեփանավան	-3.6	-2.5	1.1	6.9	11.4	14.6	17.5	17.3	13.7	8.7	3.1	-1.5	7.2	-30.7	36.8

**Օդի հարաբերական խոնավությունը (%)**

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա %	ամենաչոգ ամսվա, %
Ստեփանավան	69	70	71	72	76	78	77	75	76	76	74	71	74	55	62

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 54 սանտիմետր: Քամու հաշվարկային արագությունը սվյալները բերված են աղյուսակում:

Բնակավայրի անվանումը	միջին տարեկան մթնոլորտային ճնշումը	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով >15մ/վ օրերի քանակը	Հաշվարկային արագությունը(մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ ո տարիների ընթացքում		
				25	50	100
Ստեփանավան	842.6	1.7	25	27	29	31

### 8.2.2 Օդային ավազան.

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում տեղադրված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր

առաջարկություններից, ինչը հրապարակված է (<http://meteomonitoring.am/page/1591>), ըստ որի օդի որակը բնութագրող որոշ պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է հետևյալ աղյուսակում:

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ <sup>3</sup> )			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> )	Ազոտի երկօքսիդ (NO <sub>2</sub> )	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Մարզի օդային ավազանը աղտոտող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն են՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը, Թեղուտ ՓԲԸ-ն և այլ խոշոր ու միջին արդյունաբերական ձեռնարկություններ: Ավտոտրանսպորտի շուրջ 70%-ը ներկայումս բենզինի փոխարեն աշխատում է բնական գազով, որն անհամեմատ ավելի քիչ է աղտոտում մթնոլորտը: Բնական այրվող ռեսուրսների պահպանության, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտումից զերծ պահելու համար անհրաժեշտ է հնարավորինս արագ և սահուն կերպով անցում կատարել դեպի վերականգնվող էներգիայի (արևային, քամու, հիդրո, երկրաջերմային) օգտագործմանը: Լոռու մարզում 1 բնակչի հաշվով մթնոլորտային տեսակարար արտանետումները 2015թ. կազմում է 206.9 կգ, որը ամենաբաժր ցուցանիշն է ՀՀ-ում,

### 8.2.3. Հողային ռեսուրսներ.

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Հողերի քիմիական կազմի որոշումն իրականացվում է հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի ([www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)): 2023 թվականի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռու մարզում: Ուսումնասիրվել են ֆոնային տարածքներ: Լոռու մարզում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-25.0 անգամ, վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-




24.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.5-13.6 անգամ, արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ և մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ: Կապարի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն: Իրականացվող գործունեության ընթացքում տարածքին հարակից հողերի վրա ազդեցության մեղմացնող միջոցառումներ են իրականացվելու, տարածքը չի աղտոտվելու ծանր մետաղներով, ինչպես նաև այլ շինանյութերով:

#### **8. 2.4.Ջրային ռեսուրսներ**

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»:

2024 թ. Առաջին եռամսյակում ըստ <<Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի>> կենտրոն ՊՈԱԿ-ի տվյալների Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հունվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետվարին՝ «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

**ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը**



Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 119 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 25 շատրվանող հորատանցք, 47 չշատրվանող հորատանցք և 47 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 56 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր):

**8.2.5. Կենսաբազմազանություն**

Լոռու ֆլորիստիկ շրջանում էնդեմիկ բույսերի քանակը՝ 7 է, Կարմիր գրքում գրանցված

բուսատեսակերի թիվը՝ 47 է, ըստ (, Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա,, ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ): Գրականության և գիտական տեղեկատվության տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված տարածքը ծածկված է տափաստանային և մարգագետնատափաստանային բուսականությամբ, որը գտնվում է խիստ անմխիթար վիճակում ինտենսիվ գերաբաժեցման արդյունքում և առանց վիճակը բարելավելու հատուկ միջոցների՝ որպես արոտավայր մեծ արժեք չունի: Տարածքի բուսական աշխարհը ներկայացված է սովորական տափաստանային և մարգագետնատափաստանային բույսերով՝ կերային արժեք չունեցող մոլախոտերի մասնակցությամբ:

Տարածաշրջանում հանդիպում է՝ կենդանիների Կարմիր գրքում գրանցված Անտառակատու, *Felis silvestris* Schreber տեսակը: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU Blab(iii), բույսերի Կարմիր գրքում գրանցված Թամամշյանիելա կարմրավուն-*Tamamschjaniella rubella* տեսակը: Կատեգորիա. CR B 1 ab(ii,iii,v) + 2 ab(ii,iii,v): Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է:

Բուն ուսումնասիրվող տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան, քանի որ այդ տարածքները ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, իսկ բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են:

Տեղանքին բնորոշ կաթնասուններից առավել տարածված են՝ Սովորական դաշտամուկ (*Microtus arvalis*), Սովորական աղվես (*Vulpes vulpes*), շնագայլ (*Canis aureus* L.): Հերպետոֆաունայից՝ Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Միջին մողես (*Lacerta media*): Թռչուններից տարածաշրջանում հանդիպող տեսակներն են՝ դաշտային (*Alauda arvensis* L.) և անտառային (*Lullula arborea* L.) արտույտներ, անտառային ձիաթռչնակ (*Anthus trivialis* L.), սովորական քարաթռչնակ (*Oenanthe oenanthe* L.), ժուլան (*Lanius collurio* L.), մոխրագույն շահրիկ (*Sylvia communis* Latham), կանեփնուկ (*Linaria cannabina* L.) և սովորական կկու (*Cuculus canorus* L.), սովորական հողմահար բազե (*Falco tinnunculus* L.) և տափաստանային ճուռակ (*Buteo rufinus* Cretzschmar.), ինչպես նաև սինաթրոպ տեսակներ՝ գյուղական (*Hirundo rustica* L.), տնային ճնճղուկ (*Passer domesticus* L.), գորշ ագրավ (*Corvus corone* L.) և կաչաղակ (*Pica pica* L.):

Հարկ է նշել, որ բուն ուսումնասիրվող տարածքում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների չկան, ինչը բացատրվում է այդ տարածքի բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված և տեղանքը բավականին դեգրադացված լինելու հանգամանքով:

#### 8. 2.6. Հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը: Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տարածքին ամենամոտը՝ «Գյուլագարակի» պետական արգելավայրն է, որը ուսումնասիրվող տարածքից գտնվում է շուրջ 3 կմ հեռավորության վրա:

### 8.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ:

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին, ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին օրենքներով, N438 ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N438 որոշման մեջ լրացում կատարելու և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը հաստատելու մասին, N 104- Ն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին, ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին կառավարության որոշումներով:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման հավելված 6-ի համաձայն Լոռու մարզի Գարգառ բնակավայրում ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են:

### 5.27 ԳԱՐԳԱՌ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

1		ԱՄՐՈՑ	Ք.ա. 3-2 հազ.	գյուղի հս եզրին	Հ	1
2		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-19 դդ.	գյուղի հս մասում, Աք. Հովհաննես Եկեղեցու մոտ	Տ	3.1: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (3.1.1-3.1.2)
3		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-13 դդ.	գյուղից 1 կմ ան, Երևան-Ստեփանավան մայրուղուց աջ	Հ	2
4		ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	գյուղից հվ-ամ	Տ	4
5		ՄԱՏՈՒՌ	12-13 դդ. վրկնգ.՝ 1846 թ.	գյուղի հվ մասում	Հ	5: Ենթակայությանը ներկայացված է 4 հուշարձան (5.1-5.4)

### 8.2.8. Բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման Լոռու մարզում է գտնվում 3 երկրաբանական, 1 Ջրագրական, 1 կենսաբանական հուշարձան: Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում բնության հուշարձանների հետ: Ստորև բերված են որոշման համաձայն հուշարձանների ցանկը:

### Երկրաբանական հուշարձաններ

28.	«Անանուն» գոլավոր դայկաներ	Լոռու մարզ, Լալվար գետի կիրճ
29.	«Անանուն» դայկաների համակարգ	Լոռու մարզ, Գարգառ գյուղից 5 կմ հվ, Պուշկինի լեռնանցքի մոտ
30.	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռիբերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Չորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա

### Ջրագրական հուշարձաններ

6.	«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Չիչկան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
----	----------------	---

### Կենսաբանական հուշարձաններ

5.	«Մրտավարդ կովկասյան»	Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք
----	----------------------	-------------------------------

### 8.2.9. Մոցիալ-տնտեսական բնութագիրը

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղություններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): 2017թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն` 8.9%,
- գյուղատնտեսություն 8.7%,
- շինարարություն` 4.1%,
- մանրածախ առևտուր` 3.3%,
- ծառայություններ` 1.3%

Գյուլագարակը համայնքը ներառում է Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո և Վարդաբլուր գյուղերը:

Տնային տնտեսությունների թիվը` 2673:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կարտոֆիլի մշակությամբ: Համայնքում հիմք է դրվում նաև ոչ ավանդական մշակաբույսերի ներդրումը և զարգացումը:

Համայնքն ունի 7 միջնակարգ դպրոց, 6 մանկապարտեզ, 1 արվեստի դպրոց, գործող 3 գրադարան, առողջության առաջնային պահպանման կենտրոն: Գարգառ բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից 4կմ է:

## 9. Շինարարության ընթացքում իրականացվող գործունեությունն նպաստակր, բնութագիրը և տեխնիկական տեխնոլոգիական լուծումները

Շինարարությունն ընդհանուր առմամբ իրականացվելու է երկու փուլով, առաջին փուլի ընթացքում իրականացվելու են հողային և քանդման աշխատանքները, այնուհետև իրականացվելու է կառուցապատման` գլխավոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, որից հետո տարածքում իրականացվելու է կանաչապատում և բարեկարգում:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 640 օր, ժամանակացույցը բերված է հավելված 7-ում: Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85\* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

### 9.1. Քանդման փուլ.

Ընդհանուր առմամբ քանդման աշխատանքները ներառելու են հողային հանույթի և առկա մանակապարտեզի քանդման աշխատանքներ:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և մեխանիզմներով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ մոտ 120 մ<sup>3</sup> շինադրի տեսքով, որը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք(հավելված 3), ինչպես նաև այլ շինարարության ընթացքում առաջացած շինադր՝ մոտ 70 մ<sup>3</sup>:

Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անպահով խավերին, իսկ մնացածը տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

### 9.2 Շինարարության փուլ.

- Շինարարությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ կերպ
- շինարարական հրապարակի կազմակերպում, շինհրապարակի կազմակերպման նախագիծը պատկերված է հավելված 7-ում:
- ժամանակավոր ինժեներական ցանցերի՝ ժամանակավոր լուսավորության, ջրամատակարարման անցկացում:
- հողային աշխատանքներ՝ տարածքի հարթեցում, թափոնների հեռացում,
- շին-մոնտաժային մեխանիզմների ամբարձիչ-տրանսպորտային միջոցների և գործիքների տեղակայում շին. հրապարակում և այլն: Դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է:

Շին. հրապարակում լինելու են.

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն -1 հատ,
- ճաշասենյակ
- փակ պահեստ՝ շինանյութի համար,
- լվացարան-ցնցուղարան,
- շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
- աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, հանդերձարան, սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան- ցնցուղարան, պատրաստի 1\*1,5 չափերի գուգարանախցիկ/բիոգուգարան՝ լվացարանով/- 1 հատ,

Շինհրապարակում լինելու են նաև 1 հատ 7,30x3 մ չափերի ավտոմեքենաների անիվների

լվացման հարթակ, ինչպես նաև հետադարձ ջրամատակարարումով պոմպ: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով: Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

### **Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը**

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Արտադրական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 0,84մ<sup>3</sup> չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով ցանկապատ: Տեղադրվելու է 3-5,0մ լայնությամբ 1 դարպաս: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու՝ հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ: Շինհրապարակում նախատեսված է քանդած շինանյութի կուտակման, գտած շինանյութի տեղադրման, ինչպես նաև շինարարական աղբի կուտակման տարածքներ: Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ: Շինարարական նյութերը պահեստավորվելու են շինհրապարակում: Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը բերված է հավելված 7-ում:

**Հողային աշխատանքներ.** Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ:

1. Ընդհանուր հողային ծավալները կազմել են  
լիցք - 252.8մ<sup>3</sup>, հանույթ - 11551.4մ<sup>3</sup> :
2. Բուսական շերտի կտրում h=0.2մ - 1581.4մ<sup>3</sup>



3. Հանույթը կազմեց - 9970.0մ<sup>3</sup> ըստ բնահողերի  
կազմել են՝

- ա) հողաբուսական բնահող 8.2-II կարգ - 9463.0մ<sup>3</sup>
- բ) կոպճավազային բնահող 5.3-III կարգ - 507.0 մ<sup>3</sup>

Բուսաշերտի պահպանումը կատարվելու է 1404 ն որոշման համաձայն և հետագայում օգտագործվելու է բարեկարգման աշխատանքների ընթացքում, ավելացված հողային հանույթը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Յուրաքնչյուր 50սմ հաստությամբ շերտով ետլիցքից հետո կատարվելու է գրունտի չոր և թաց տոփանում: Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ.** գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ավտոկոռնկ՝ 1 հատ
- էքսկավատորներ՝ 2 հատ
- ավտոինքնաթափ մեքենա՝ 2 հատ
- ավտովերհան՝ 1 հատ:

Օգտագործվելու են նաև ամբարձիչ, տրակտոր, բետոնախառնիչ, բետոնամղիչ պոմպ, եռակցման ապարատ, ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներ, ձեռքի տոփանիչ և այլն: Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80\* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5<sup>0</sup> -ից ոչ ավել թեքություն: Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ

քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում: Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

**Էլեկտրամատակարարում.** դպրոցի շինարարության ընթացքում լինելու է ժամանակավոր էլեկտրամատակարարում: Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ:

**Ջրամատակարարում և ջրահեռացում.** Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում: Շինարարության համար ջուրը բերվելու է կից մանկապարտեզի ջրատարից, որը համայնքային է, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ – հաշվիչ: Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով:

**Հրդեհաշիջման համակարգ.** շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

**Շինաղբի կուտակումը** կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Կատարվելու է քանդման արդյունքում առաջացած թափոնների տեսակավորում; Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմվելու է 9468կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5\*1 չափերի 2 աղբարկղ:

**Բարեկարգում.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ:

**Կանաչապատում.** Տնկվելու են նոր ծառեր՝ 25 հատ կովկասյան եղևնի, ինչպես նաև թփերի

տեսքով

-ասպիրակ՝ 19 հատ,

- գնդաձև իլենի 60 հատ:

Կանաչապատման նախագիծը համաձայնեցվելու է Գյուլագարակի համայնքապետարանի հետ:

## 10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Դպրոցական շենքի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և հոսանք:

**Ջուր.** շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսակենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Աշխատողների կենցաղային նպատակների համար օգտագործվելու է մանկապարտեզի կամ հարակից դպրոցի գոյություն ունեցող ջրագիծը՝ անցակացվելու է ժամանակավոր ջրագիծ: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Ջրցանի համար նախատեսված տեխնիկական ջուրը մատակարարվելու է լիցենզավորված կազմակերպությունների կամ անձանց կողմից, որոնց հետ պայմանագիրը կկնքվի կապալառու կազմակերպությունը շինարարական աշխատանքների սկզբում:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝  $W\ddot{E}.i. = (n \times N + n1 \times N1) \times T$ ,

որտեղ  $n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup> օր/մարդ  $n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ մոտավոր 40 մարդ

$N1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025մ<sup>3</sup> 3օր/մարդ  $T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 640 օր:

$W$ ի.տ.=  $(5 \times 0.016 + 45 \times 0.025) \times 640 = 771.2$  մ<sup>3</sup> /շին. Ժամ:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝  $U1 = S1 \times K1 \times T$ , որտեղ՝  $S1$  – ջրվող տարածքի մակերեսը 750 մ<sup>2</sup>, (շինհրապարակ, ճանապարհներ)

$K1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015մ<sup>3</sup>,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված կրկնակի

ջրցանք)  $U1 = 750 \times 0.0015 \times 250 = 281,25$  մ<sup>3</sup> /շին. ժամ. կամ 1,219 մ<sup>3</sup> /օր: Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 1052.45 մ<sup>3</sup> /շին. ժամ:

**Կեղտաջրեր.** շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող 1\*1,5 չափերի սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Ջրահեռացման համար նախատեսվում է հորի կառուցում:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- կախովի ցեմենտի պանելներ
- ֆիբրոցեմենտ
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ, բետոն, պեմզաբլոկ
- ապակի

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե երեսապատման սալիկներով և տրավերտինով: Պատուհանները լինելու են այլումինե, ջերմ. կամրջակով, երկշերտ ապակեփաթեթով: Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետաղախային խեցեասալիկներով և վինիլներով Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով կամ տեղադրվելու է բետոնային հանգույց: Շինհրապարակում նախատեսվում է բետոնի տեղադրման վայր՝ պաշտպանված քամուց, անձրևից և ձյան տեղումներից: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

### **Շահագործման փուլ.**

Դպրոցի նախագծային լուծումներում ներառվել են դպրոցի տարրական, միջին և ավագ

դպրոցների հոսքերը, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, վարչական մասնաշենքերը, բացօթյա մարզահրապարակը և խաղահրապարակը:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Դպրոցի սպորտային հրապարակները լինելու են ռետինե ծածկույթով: Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆ.04.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա: Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով: Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը
- 5) լուսավորության համակարգերին

Դպրոցի աստիճանավանդակները լինելու են բազալտե սալվածքներով, դահլիճը՝ լամինատե ծածկույթով:

**Ջերմամատակարարում.** Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է՝ ջեռուցման միջոցով՝ էլեկտրական յուղային ռադիատորներով, ինչպես նաև ջրային երկխողովականի ջրի

մեխանիկական շրջանառությամբ պլումբինե ռադիատորներ: Բացառությամբ սպորտսրահի՝  
որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Ջնռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են  
ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝  
փակող փականներ:

Մենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի:

Դպրոցում մատակարար խողովակը անցնում է ձեղնահարկով, իսկ հետադարձը՝ +0.100 նիշի:  
Մանկապարտեզում, սպորտ. սրահում և հանդիսությունների դահլիճում  
մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով:

Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավիկ փորձարկման, որից հետո  
կատարում են խողովակների փչամաքում:

Էլեկտրասնուցման արտաքին ցանցերի իրականացումը (միացումները) կատարվում են  
անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, որոնք ներկայումս ապահովում են գոյություն ունեցող  
դպրոցի կարիքները: Տեխնիկական պայմաններ չկան, կտրվեն առաջիկայում: Ջնռուցման,  
օդափոխության և էլեկտրամատակարարման նախագծերը իրականացվել են համաձայն ՀՀ-ում  
գործող նորմաների և կանոնների:

**Հակահրդեհային անվտանգություն.** Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ  
համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի 2 շիթ 2.5լ/վրկ էլթով: Համակարգը սնվում է նկուղային  
հարկում նախատեսված ռեզերվուարներից՝  $2x(1.7x2.3x1.8մ W=7մ^3)$ , որոնցում առկա է  
հրդեհամարման անհրաժեշտ ծավալը: Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա  
Էլ-եռակցման  $\emptyset 76x3մմ$  և  $\emptyset 57x3մմ$  տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից: Հրշեջ  
պահարանները համալրված են հրշեջ ծորակներով և  $l=20.0մ$  երկարության փողրակներով:

**Օդափոխություն.** դպրոցն ապահովված է օդափոխության ներածման և արտածման  
համակարգերով, որոնց ճյուղավորումների վրա տեղադրվում են ջերմակարգավորիչ,  
ջերմապոլիպրոպիլենային փականներ և եռաբաշխիչներ: Օդի արտածման համար  
կտեղադրվեն դեֆլեկտորներ՝  $D=300$ , իսկ ներածման համար կտեղադրվեն ժայուղային ցանց՝ 1  
հատ: Օդափոխության արտածումն իրականացվում է արհեստական եղանակով՝ օդը մտնում է  
ռեկուպերատորային ագրեգատ, տաքացնում է ներածվող օդը՝ խառնման միջոցով, այնուհետև  
դուրս է մղվում արտաքին միջավայր: Տնօրենի, ուսուցիչների, համակարգիչների սենյակներում  
նախատեսված օդի ներածման օդորակիչներ: Ման հանգույցներից, դասարաններից օդի  
արտածումն իրականացվում է բնական եղանակով: նկուղային հարկերում օդափոխությունն  
իրականացվում է գլանային ռեկուպերատորներով: Օդատարները լինելու են 0,5-0,7մ  
տրամագծով՝ ցինկապատ պողպատից, ունենալու է հովանոց տանիքում: Բոլոր օդատարները  
տեղադրվում են առաստաղի տակ՝ կեղծ առաստաղի մեջ, իսկ ձեղնահարկում՝ մեկուսացվում  
են արհեստական բամբակով: Օդի ներածման և արտածման համար տեղադրվում են  
կարգավորող ճաղավանդակներ:

### **Կենցաղային կոյուղի**

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին  
ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված  
սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանում կոյուղու ճնշումային սարքավորման

օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում):

Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

Կառուցվելու է մաքրման կայան, որից դուրս եկող մաքրված ջուրը ստորգետնյա խողովակներով միանալու է 100մ հեռավորության վրա գտնվող ոռոգման առվին:

**Ցանկապատում.** Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1,80մ բարձրությամբ ճաղաշարով՝ 10սմ բետոնե հիմքի վրա: Ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ՝ հենասյուններով: Ֆուտբոլի դաշտի ցանկապատը 4.2 մ բարձրությամբ՝ 60 սմ բետոնե հիմքով:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Գյուլագարակ համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Տեղադրվելու են 4 հատ 1\*1,5 չափերի աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

**Բարեկարգում, Կանաչապատում.** Մինչև շինարարական աշխատանքների սկսելը իրականացվելու է առկա ծառերի սահմանազատում՝ 1 մ տրամագծով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 2358 մ<sup>2</sup> մակերեսով: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ/գետձածկույթով/՝ համաձայն Գյուլագարակի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի, Հավելված 6:

**Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն.** Շահագործման փուլում դպրոցի շենքն հանձնելուց առաջ կատարվելու է շինության էներգաարդյունավետության համապատասխանության գնահատում, կկիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված է և (կամ) Չ1 ընթացակարգերի պահանջները, էլեկտրականության միացումները լինելու են արդեն իսկ գոյություն ունեցող դպրոցի տարածքից:

**Արևային վահանակների տեղադրում:** Գարգառի դպրոցի հարավային տարածքի գոունտային մակերեսին նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով՝ 175 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի նախագծման համար հիմք են հանդիսացել:

1. Տեղանքի հատակագծերը
2. Տեղազնման արդյունքները
3. Տեխնիկական առաջադրանքը

ՖՎ վահանակները 30° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 318 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների

ԱՀԿՈԻ(Առավելագույն հազորության կետի ուժ) 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 50 կՎտ է /Եռաֆազ/:

Փոխակերպիչը և ՓՀՀՏ-ն տեղադրվում են շենքի ներսում առանձին հատկացված սենյակում: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն մալուխով շենքի մուտքային բաշխիչ վահանին էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները իջեցվում են շենքի հորանների միջով՝ ծալքախողովակի մեջ և միանում է շենքի էներգետիկական սենյակում գտնվող փոխակերպիչներին: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

ՖՎՀ-ն միացվում է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին:

Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

## **11.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը**

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխազագերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ: Դպրոցի շենքը կառուցվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30.01-2014թ. «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ 11-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:

### **11.1 Օդային ավազան.**

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխազագերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման



Ժամանակ առաջացող փոշու տեսքով: Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման, տեղափոխման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ՝ առաջացող փոշու տեսքով: Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում՝ պայմանավորված գնահատման հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների պարտադիր կատարմամբ: Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ: Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,
- ավազի շերտերի փռումը և հողի հետլիցքն իրականացնել նախապես թրջված վիճակում,
- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը:

Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

### **11.2 Հողային ռեսուրսներ.**

Գործունեության ենթակա տարածքի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը: Շահագործման փուլում գործունեությունը հողային ռեսուրսների վրա ազդեցություն չունի:

### **11.3 Ջրային ռեսուրսներ.**

- Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.
- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
  - անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան՝ 0,84 մ<sup>3</sup> չափերի:
  - ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
  - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
  - բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցներից՝ բիոզուգարաններից: Տեղադրվելու են 1.0x1,5 մ չափերի չափերի 1 հատ բիոզուգարան: - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով
- շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է բնակավայրի համայնքային ջրատարին, որի համար կկնքվի պայմանագիր:

#### **11.4 Կենսաբազմազանություն.**

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է հին դպրոցի և մանկապարտեզի հարակից հատվածում, բուսականությունից առկա են մոլախոտեր, ծառեր և թփերը բացակայում են:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները: Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է արդեն կառուցապատված տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում: Նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որը ներկայացված է կանաչապատման բաժնում:

#### **11.5 Թափոններ.**

Քանդման արդյունքում առաջանալու են տարատեսակ թափոններ, որոնք տեսակավորվելու են, կուտակվելու են շինհրապարակի առանձին հատվածներում և հանձնվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին, պահանջարկի դեպքում նաև բնակիչներին: Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի

և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 120 մ<sup>3</sup> ծավալով և շուրջ 70մ<sup>3</sup> քանդման ժամանակ առաջացած շինադբ: Փորման աշխատանքների արդյունքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 3140110008995 ծածկագրով:

Նշված թափոնների քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերպության կողմից շինարարության փուլում, ելնելով փաստացի արդյունքներից: Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին:

Կենցաղային աղբի հաշվարկները (Կենցաղային աղբի ծածկագիրն է 91200400 01 00 4):

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.  $M=n*m$   $m - 1$  հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ  $n -$  աշխատողների թիվն է  $M=45*120=5400$  կգ/տ կամ 7.4կգ/օր: Շինարարությունը տևելու է 1.75 տարի, հետևաբար  $M=5400*1.7= 9468$ կգ/տ կամ 14.79 կգ/օր (640 աշխատանքային օր): Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

Ձերծ պահել շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը թափոնների կուտակումներից,

- հստակեցնել շին հրապարակի տարածքում շին աղբի նախնական կուտակման վայրը,
- հավաքել շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,
- քանդման ընթացքում առաջացած շինարարական նյութերի տեսքով թափոնները՝ փայտ, քար, պատուհաններ, դռներ և այլն, կտեսակավորվեն և կտեղադրվեն առանձին-առանձին՝ շինհրապարակում,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 4 հատ 1,5x1մ<sup>3</sup> չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,
- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

## 11.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլորնը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ: Էկսկավատորի աղմուկի մակարդակը՝  $L_{A_{էկվ}}$ , կազմում է 85 դԲ:

Գլորնի աղմուկի մակարդակը՝  $L_{A_{էկվ}}$ , կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝  $\leq 200 \text{ կգ/մ}^2$ :

Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m_{է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$I_{աղ} = 13 \lg m_{է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ  $m_{է} = Km$  – մակերեսի խտության էկվիվալենտն է,

$m$  – մակերեսի խտությունն է,  $\text{կգ/մ}^2$ ,

$K$  – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը  $200 \text{ կգ/մ}^2$   $K=1,3$   $m$

$$է = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m_{է} - 13 = 18,2 \text{ դԲ}$$

շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Չայնամեկուսացումը  $R_{տն}$  ըստ աղուսակ 2` կազմում է միջինը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

$$\text{Գլղոնի համար } LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

**Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, բերված են աղյուսակ 1-ում

**Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները**

**Աղյուսակ 1**

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները $X_0$ , $Y_0$ և $Z_0$ առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ <sup>2</sup> .10 <sup>-3</sup>	դԲ	մ/վ .10 <sup>-3</sup>	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75
1.	Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:			
2.	Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:			

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

### 11.7 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- հրդեհների առաջացման, բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),

- աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման,

- հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի հետ: Համաձայն «Գեոզոն» ՍՊ ընկերության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների՝ վտանգավոր երևույթներն ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Կատարվել են գործիքային ստուգումներ՝ շերտերում առաձգական ալիքների տարածման արագությունների որոշման համար: Արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման նպատակով, քաղաքաշինական բնագավառում առկա օրենսդրական գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների՝ համապատասխան պարտադիր պահանջներից: Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով,

տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,
- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով, նկուղն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, սանհանգույցով, լվացարանով, ստորգետնյա հատվածում թաքստոց համար նախատեսվում է վթարային ելք,
- դպրոցն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով՝ յուրաքանչյուր հարկում 10 հատ, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, ունենալու է 1 վերելակ,
- տեղադրվելու 2 հատ 50մ<sup>3</sup> տարողության ջրի բաքեր՝ հրդեհամարման նպատակով,
- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,
- աստիճանավանդակը, դռները լինելու են հակահրդեհային:

Արտակարգ իրավիճակների մասին հաշվետվության լրացման ձևը բերված է ստորև.

Արտակարգ պատահարի մասին հաշվետվության ձև

Պատահարի ամիս/	Պատահարի նկարագրությունը	Պատահարի վերացման	Միջոցառումների ժամկետները և	Պատահարի վերացման
----------------	--------------------------	-------------------	-----------------------------	-------------------



ամսաթիվը		միջոցառումները	պատասխանատուն	կարգավիճակը

**11. 8 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.**

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- արտակարգ իրավիճակների առաջացման, շինտեխնիկայի շահագործման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների, շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ: Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-4-80\* նորմերի: Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.
- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն,
- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003
- սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- պահպանել Առողջապահության նախարարի 28 մարտի 2017թ. «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՐԿՐԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2.2.4-016-17 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 82 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 12-Ն հրամանի պահանջներ,
- ապահովվել աշխատողների անվտանգությունը՝ բարձրության վրա,
- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են

ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբոնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,

- հատվող փողոցներում նախապես տեղադրել խողովակապատյաններ և անմիջապես կատարել հողի հետլիցք, իսկ այն հատվածները որտեղ հատվում են ուղղահայաց փողոցների հետ՝ անցորդների համար կառուցել ժամանակավոր կամրջակներ,

- ձյան, անձրևի, ուժեղ քամու, կայծակի դեպքում խստիվ արգելվում է շինմոնտաժային աշխատանքների կատարումը,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ: Շահագործման փուլ. Շահագործման փուլում դպրոցն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01- 2006 շինարարական նորմերին համապատասխան: Մասնավորապես նախատեսվում է.

- ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,
- հաշմանդամների համար նախատեսված սան հանգույցով,
- տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

### **11.9 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.**

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ Էներգախնայողության և Էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը: Էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Չ1 ընթացակարգերի պահանջները: Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված Էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝ Էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է Էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է Էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող Էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ: Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների Էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան: Հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում

(ծանուցման փաթեթ) էներգաարդյունավետության սերտիֆիկատի ներկայացման պահանջը պարտադիր չէ: Նոր կառուցվող շենքի և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի(N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները: Դպրոցի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքերը կկառուցվեն.

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են սրբատաշ ֆայբերգեմենտային սալիկներով, պահպանելով հրակայուն, ոչ ջրաթափանց և հողմաջրապաշտպան, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը,
- կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ՝ օդային միջնաշերտով, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,
- շենքերի միջտարածքային ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,
- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով: Շենքը ներառյալ ստորգետնյա հարկերը (թաքսոոց) կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,
  - արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,
  - էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով, - ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

#### **11.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.**

Գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, գործունեության ընթացքում իրականացվելու է շինհրապարակի սահմանազատում, այնպես որ ազդեցությունները չեն նախատեսվում հարակից տարածքների վրա: Կառուցապատման ենթակա տարածքը երկար տարիներ կառուցապատված է եղել և չի առնչվում բնակավայրի վարչական տարածքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ: Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր

կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**11.11 Սոցիալական.**

Դպրոցի շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 45 մարդ, որից՝ 40 բանվոր, 5-ը ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով: Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում: Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: Նոր դպրոցի կառուցումը կապահովվի աշակերտների ուսուցման կազմակերպումն ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, նոր չափորոշիչներով կառուցված շենքում: Բողոքի գրանցման ձևը բերված է ստորև.

Բողոքի գրանցման ձև

Դիմումը ներկայացնելու ամիս/ամսաթիվը	Դիմողի անուն/ազգանունը	Դիմողի կարգավիճակը (դպրոցի դասատու, աշակերտ, ծնող, հարևան, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ընթացքում/փոխանցված ՀՏՁՀ-ին/ չլուծված)

**11.12 Լանդշաֆտ.**

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ

ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է մասնակի կառուցապատված տարածքում: Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն, կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում: Նախատեսվող դպրոցի շենքը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում:

### 11.13 Բարեկարգում և Կանաչապատում.

Դպրոցի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման՝

կովկասյան եղևնի 25

ինչպես նաև ասպիրակ 19,

գնդաձև իլենի 60

և սիզամարգերի միջոցով՝ համաձայն Գյուլագարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի:

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում: Կանաչապատում. կատարվելու է գործունեության ենթակա տարածքի կանաչապատում, որի պահպանման համար նախատեսվում է.

- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաշոդականությունն ապահովելու նպատակով,

- նորատունկ բուսականության, ծառերի չկաշելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում: Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով: Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНИП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ 2 ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.  $W = (M \times 0,4) \times m$  Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի, m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից, հետևաբար,  $W = 2358 \times 0,4 \times 25 = 23580$  լ/ջուր կամ 23.58մ<sup>3</sup> /տարի ջուր (տարվա կտրվածքով):

## 12. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ: Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած համապատասխանությունները,
- խստիվ պահպանել շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի մապատասխանության ապահովվում,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,
- ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովվելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով: Շինարարության

իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

### 13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

Մեղմացնող միջոցառումներ				
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Մոնիտորինգի պատասխանատու մարմին
<b>ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b>				
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձեռքբերում	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն:	1.1. Մշակվել և ՇՄՆ է ներկայացվելու հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու և փորձագիտական եզրակացություն ձեռք բերելու նպատակով:	«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ	
2. Հասարակական լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ հանրային քննարկումն իրականացվել է 2024 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 14:30-ին, Գարգառի վարչական բնակավայրի ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Առավոտ» օրաթերթի մայիսի 17-ի համարում, 2024թ.:	ՀՏԶ, «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ Դպրոցի տնօրինություն, Գյուլագարակ համայնքապետարան	
3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:	3.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀՏԶ	
<b>ՇԻՆԱՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ)</b>				
1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան				
4. Շինարարական	ԲԿՊ-ի և դպրոցի վերակառուցման	4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ	Կապալառու	ՀՏԶ



<p>հրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակին կից և շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:</p>	<p>իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պաստառներ այլ:</p> <p>4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում:</p> <p>4.4. Անհրաժեշտ է <i>ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը</i> շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:</p> <p>4.5. Անհրաժեշտ է փակցնել <i>հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ</i> և այլն:</p> <p>4.6. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>4.7. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով, ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:</p> <p>4.8. Բարձրության (1.5 մ և ավելի) վրա աշխատանքներում իրականացնել անվտանգության միջոցառումներ, մասնավորապես անվտանգության ձողեր, տեսանելիության ժապավեններ, նշաններ և այլ միջոցառումներ, ինչպես նաև բանվորներին տրամադրել անվտանգության գոտիներ:</p> <p>4.9. Ըստ անհրաժեշտության իրականացնել փրուզման վտանգ ունեցող կառույցների ամրակալում դպրոցի հին շենքի ապամոնտաժման գործողություններում:</p> <p>4.10. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁՀ-ին:</p> <p>4.11. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորումը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում:</p> <p>4.12. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</p>		
<p>2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան</p>				
<p>5 Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Օրագրի ժամկետների հետաձգումներ:</p>	<p>5.1 Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին: Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի.</p> <p>Ա: Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում, անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ: Բ: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ այդ թվում ՀՏՁՀ-ի համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:</p> <p>Գ. Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան: Բողոքի գրանցման ձևը տես Հավելված 1-ում:</p>	<p>ՀՏՁՀ Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

		<p>Դ. Անհրաժեշտ է նշանակել սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ, իսկ 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>		
<p>Շրջակա միջավայրի պահպանության պլան</p>				
<p>6 Հողային աշխատանքներ:</p> <p>Շինանյութերի փոխադրումներ:</p> <p>Այլ շինարարական աշխատանքներ:</p>	<p>Դպրոցի հարակից տարածքում (մոտ 3-50մ հեռավորության վրա) առկա ազդակիրների՝ բնակելի տներ և կից շինություններ, վրա գնահատվում են փոշու և այլ վնասակար գազերի արտանետումներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- գոյություն ունեցող կաթսայատան, ասֆալտե ծածկի և եզրաքարերի ապամոնտաժման աշխատանքներ ի,</li> <li>- նախագծվող նոր մասնաշենքերի հողային աշխատանքներ ի ընթացքում,</li> <li>- տրանսպորտային և միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում:</li> </ul> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում է աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p> <p>Նախագծվող դպրոցի տարածքում առկա ծառերի վրա ազդեցություն:</p> <p>Նխագծվող դպրոցի տարածքում առկա բուսահողի վրա ազդեցություն:</p>	<p><b>6.1 Օդի աղտոտման և փոշու կառավարում</b></p> <p>6.1.1 Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</p> <p>6.1.2 Անհրաժեշտ է իրականացնել պարբերական ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>6.1.3 Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:</p> <p>6.1.4 Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը (≤30 կմ/ժ) փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p><b>6.2 Աղմուկի և թրթռումների կառավարում</b></p> <p>6.2.1 Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:</p> <p>6.2.2 Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը:</p> <p>6.2.3 Հաշվի առնելով տարածքին կից բնակելի տների առակայությունը, աղմուկ առաջացնող աշխատանքներն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ 9:00-18:00:</p> <p>6.2.4 Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, որոնց սարքին լինելը ստուգվելու է յուրաքանչյուր օր աշխատանքները սկսելուց առաջ:</p> <p>6.2.5 Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</p> <p>6.2.6 Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և հետևել ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում:</p> <p>6.2.7 Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով:</p> <p><b>6.3 Բուսականության պահպանություն և կառավարում</b></p> <p>6.3.1 Անհրաժեշտ է նախատեսել վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումներ, որպեսզի այդպիսի ծառերը լինեն հեշտությամբ ճանաչելի աշխատողների, տրանսպորտային միջոցների համար և պաշտպանված լինեն շին գործողությունների ընթացքում թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից:</p> <p>6.3.2 Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության պաստառապատում, իսկ ըստ անհրաժեշտության՝ ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:</p> <p>6.3.3 Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա</p>	<p>Կապալառու, Գյուլագարակ համայնք,</p>	<p>Դպրոցի տնօրինություն և ՀՏՁՀ</p>

		<p>բուսականության ոռոգման միջոցառումները դպրոցի շինարարության ընթացքում:                  6.3.4 Անհրաժեշտ է խուսափել տարածքում այն ծառերի և թփերի հատումից, որոնք ազդեցության չեն ենթարկվում՝ համաձայն նախագծի:  <b>6.4 Բուսահողի պահպանում և կառավարում</b>                  6.4.1 Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթակա հողաբուսաշերտի մերկացում և ժամանակավորապես պահեստավորում/պահպանում հրապարակում դրա համար նախատեսված վայրում՝ հետագայում տարածքի բարեկարգման աշխատանքներում օգտագործելու նպատակով:                  6.4.2 Հողաբուսաշերտի պահեստավորում պետ է իրականացնել 2 մ չգերազանցող բարձրությամբ կույտերի տեսքով և պաստառներով ծածկված վիճակում:                  6.4.3 Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել հողային մաերեսների վրա անուղղակի ազդեցություններն, ինչպիսիք են շինթափոնների տեղադրում, կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացում և այլ գործողություններ:                  6.4.4 Անհրաժեշտ է շին-հրապարակում ունենալ կեղտաջրերի հեռացման տարա (≥3 խ.մ) և հնարավոր կեղտաջրերը/բետոնաջրերը հեռացնել նախատեսված տարայում: Տարայում հետերոգեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը՝ որպես շին աղբ, հեռացնել աղբավայր:</p>		
<b>4. Ենթակառուցվածքների և այլ ազդակալիչ օբյեկտների կառավարման պլան</b>				
<p>7. Ենթակառուցվածքների և այլ ազդակալիչ օբյեկտների վրա ազդեցություն:</p>	<p>Դպրոցի տարածքում առկա կաթսայատան ապամոնտաժում և նորի կառուցում:</p>	<p>7.1 Անհրաժեշտ է իրականացնել դպրոցի տարածքում առկա ենթակառուցվածքների շինարարական գործողությունները ըստ նախագծի:                  7.2 Դպրոցի տարածքում նախագծվող նոր մասնաշենքերի հողային աշխատանքների ընթացքում չնախատեսված ենթակառուցվածքների ի հայտ գալու դեպքում, անհրաժեշտ է անհապաղ տեղեկացնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:                  7.3 Անհրաժեշտ է խուսափել շինարարական աշխատանքների ընթացքում դպրոցի տարածքի մերձակայքում առկա կառույցների վրա հնարավոր ֆիզիկական ազդեցություններից, իսկ շինարարության ընթացքում պատճառված վնասներ դեպքում՝ վերջիններս կվերականգնվեն շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցներով:                  7.4 Անհրաժեշտ է խուսափել դպրոցի մերձակայքում առկա կառույցների մոտ մեքենաների/մեխանիզմների կայանումից և ապահովվել վերջիններիս անխափան շահագործումը :</p>	<p>Կապալառու</p>	
<b>5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան</b>				
<p>8. Շին հրապարակի կազմակերպում:</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակալիչ կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:</p>	<p>8.1 Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես նախագծվող դպրոցի տարածքի ներսում բացառելով այլ ազդակալիչ տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության:                  8.2 Անհրաժեշտ է շին-հրապարակը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի դպրոցին կից բնակելի տների անխափան մոտեցումը:                  8.3 Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p>	<p>Կապալառու</p>	

		<p>8.4 Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր անթափանցելի ցանկապատում ողջ շին-հրապարակի պարագծով:</p> <p>8.5 Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>8.6 Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում:</p> <p>8.7 Անհրաժեշտ է ձեռնարկել բաց հորերի տեսանելի կերպով ցանկապատում/նիշահարում և նախագգուշացնող նշանների պարտադիր տեղադրում:</p> <p>8.8 Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, Բրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով:</p>		
<p><b>6.</b></p>	<p><b>7.</b></p>	<p>Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան</p>		
<p>9. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ</p>	<p>Դպրոցի մոտեցման ճանապարհների վիճակը գնահատվում է բավարար երթևեկության կազմակերպման համար:</p> <p>Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>→ երթևեկության խափանումներ</li> <li>→ երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</li> <li>→ փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ</li> <li>→ հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում</li> <li>→ շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների և հնարավոր վնասներ:</li> </ul>	<p>9.1 Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>9.2 Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</p> <p>9.3 Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել դպրոցի մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի նախնական վիճակը:</p> <p>9.4 Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն:</p> <p>9.5 Շինարարական հրապարակի մուտքերն ու ելքերն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ նվազագույնս խոչընդոտեն կից բնակելի տների և շինությունների անցուղարձին, ընդհանուր երթևեկությանը և հասարակական անվտանգությանը:</p> <p>9.6 Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>9.7 Կարողները կվերապատրաստվեն ԵԿՊ-ի (Երթևեկության կառավարման պլանը) և անվտանգության վերաբերյալ:</p> <p>9.8 Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>9.9 Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>9.10 Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով:</p> <p>9.11 Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելիանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>9.12 Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p> <p>9.13 Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպձային</p>	<p>Կա պալ առո ւ</p> <p>Կա պալ առո ւ</p> <p>Կա պալ առո ւ</p>	<p>ՀՏՁԶ</p>

		<p>մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>9.14 Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում անհրաժեշտ է այն մաքրել:</p> <p>9.15 Անհրաժեշտ է մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտան տեխնիկայի կայանման համար:</p> <p>9.16 Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p>	Կապալառ	
<b>7. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</b>				
<p>10 Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>10.1 Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում:</p> <p>10.2 Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</p> <p>10.3 Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում:</p> <p>10.4 Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին:</p> <p>10.5 Արտահոսքերի դեպքում անհրաժեշտ է հեռացնել աղտոտված հողային զանգվածը հնարավոր աղտոտումը կանխելու համար: Աղտոտված հողային զանգվածը պահել և տեղափոխել թույլատրված աղբավայր հատուկ պաշտպանիչ տպրակներով:</p> <p>10.6 Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան</p> <p>10.7 Քիմիական և այլ, վտանգավոր նյութերն ու վառելիքային նյութերը պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով (ավազե, բետոնե կամ մետաղական հիմքեր) և պատնեշով:</p>	Կապալառ	

		<p>10.8 Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>10.9 Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՀՏՁՀ-ին հաշվետվության հատուկ ձևը լրացնելու միջոցով</p>		
<b>8. Թափոնների և նյութերի կառավարման պլան</b>				
11. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:	<p>11.1 Հողային հանույթը և այլ շինարարական աղբը տեղադրել բացառապես տեղական իշխանության կողմից հատկացված վայրում:</p> <p>11.2 Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</p> <p>11.3 Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ և հեղուկ:</p> <p>11.4 Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում փակ/մեկուսացված հատուկ տարաններով:</p> <p>11.5 Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>11.6 Կենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում:</p> <p>11.7 Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <p>11.8 Անհրաժեշտ է դպրոցի հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած նյութերը տեսակավորել երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերի և շին-աղբի:</p> <p>11.9 Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս այլ աշխատանքներում օգտագործելու նպատակով, իսկ գոյացած աղբը տեղափոխել համայնքային աղբավայր</p>	Կապալառու	
<b>9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ</b>				
12 Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	<p>12.1 Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն:</p> <p>12.2 Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին:</p> <p>12.3 Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ:</p>	ՀՏՁՀ Կապալառու	
<b>10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան</b>				
13 Շինհրապարակ	Անհրաժեշտ է	13.1 Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել	Կա	

ի վերականգնումը Դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչապատում	շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:	շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն: 13.2 Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները, ինչպես նաև ցայտադրյուր-հուշարձանի ապամոնտաժման և վերատեղադրման աշխատանքները: 13.3 Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը: 13.4 Անհրաժեշտ է իրականացնել ՀՏՁՀ-ի կողմից մշակված ընդունման- հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները: 13.5 Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները՝ համաձայն տարածքի կանաչ գոտիների բարեկարգման նախագծի համաձայն:	պալատ և	
<b>ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>				
14 Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	14.1 Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ զանգվածի 90% կայտղականությունը և աճը: Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները:	Դպրոցի տնօրինություն/Կապալատ և	
15 Բուսականության վերականգնում	Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն	15.1 Անհրաժեշտ է ներառել Ծրագրի համար նախատեսված բուսականությունը դպրոցի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: 15.2 Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:	Դպրոցի տնօրինություն, ՀՏՁՀ, , Դպրոցի տնօրինություն	
16 Բնապահպանական աուդիտ		16.1 Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ:	ՀՏՁՀ	

## 14. Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիտորինգ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
------------------------------------	-------------------------------	-------------------	--------------------------------	--	-----------------	------------------------------

**ՇԻՆԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ**

<p>1. Հասարակական լուսամներ և կապը հանրության հետ</p>	<p>Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածություն Ծրագրի Բողոքներին արձագանքման մեխանիզմի վերաբերյալ</p>	<p>Բոլոր շին տեղամասեր</p>	<p>Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լուսամներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ</p>	<p>Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է ԲԳՈՒՇ-ում նկարագրված բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան</p>	<p>ՀՏԶՀ</p>	<p>Հանրային լուսամները շին աշխատանքները սկսելուց առաջ: ԲԱՄ-ը կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>2. Տարածքի մաքրում բուսականությունից</p>	<p>Տարածքի մաքրումը բուսականությունից հնարավորինս նվազագույնի է հասցված Շինհրապարակի մերձակայքի բուսականությունը պաշտպանված է</p>	<p>Բոլոր շին տեղամասեր</p>	<p>Տարածքի բուսականությունից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում Շին. հրապարակի ստուգայցեր</p>	<p>Հատված թփերի գրանցամատյանը առկա է</p>	<p>ՀՏԶՀ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>3. Երջակա միջավայրի պահպանություն</p>	<p>Նստվածքների առաջացում</p>	<p>Բոլոր շին տեղամասեր: Շինհրապ</p>	<p>Ակնադիտական ստուգումներ շինհրա</p>	<p>Գրանցամատյանում գրանցված բողոքների</p>	<p>ՀՏԶՀ ՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>



	Փոշու և այլ օղի աղտոտիչների արտանետումներ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	արակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ	պարակի ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	քանակն ու կարևորությունը: Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում:		ան
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում: Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի գտնվելու վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրված ին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՀՏՁՀ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

<p>6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը</p>	<p>Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը: Դպրոցների, դասերին և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարություններ և անվտանգության հարցերը Ճանապարհների և այլ կառույցների՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:</p>	<p>Ճանապարհների օգտագործում, սարքավորումների և Նյութերի տեղափոխության համար: Շինհրապարակի մոտեցման մուտքերը</p>	<p>Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր</p>	<p>Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին : Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը</p>	<p>ՀՏՁՀ ՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում</p>	<p>Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոս</p>	<p>Բոլոր շինարարական տեղամասերը</p>	<p>Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր</p>	<p>Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևը լրացված է: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակներ</p>	<p>ՀՏՁՀ ՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>

	սքեր			ի պլանին համապատասխան:		
8. Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Բոլոր շինարարական տեղամասերը	Փաստաթղթերի ստուգում: Շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգների համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:		
9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շինհրապարակը մաքրված է, նույնիսկ և թափոնները հեռացված են: Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են: Շինհրապարակը	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգ	Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին: Ապահովված է թփերի 90% կաչողականությունը	ՀՏՁՇ ՎԽ	

	արակի տարածքը բարեկարգված է:		նվաճում է և սկզբնական վիճակը:			
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ</b>						
10.Թերությունների վերացման աշխատանքներ	Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	Դպրոցի տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափազրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջների	ՀՏՁՀ	
11.Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսական նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	ՀՏՁՀ Դպրոցի տնօրինություն	


**15. Բողոքների ընթացակարգ**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը: Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը

## Գրականություն

1. СП.485.13130.2021:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ
3. ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
4. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
5. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:
6. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն»:
7. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
8. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
9. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական  
/https://armstat.am/file/Map/MARZ\_01.pdf/ կայք:

## Հավելված 1, Սեփականության վկայական

	<p><b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b> <b>ՎԿԱՅԱԿԱՆ</b> ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ</p>	 <p>Կադաստրի կոմիտե</p>
<p>Սույն վկայականով հաստատվում է 15 մայիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.</p>		
<p><b>1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)</b></p>		
<p>ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ</p>		
<p><b>2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b></p>		
<p>Մարզ Լոռի, համայնք Գյուլագարակ գյուղ Գարգառ Կենտրոնական փողոց 50/1 հողամաս</p>		
<p><b>3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</b></p>		
<p>Համայնքի ղեկավարի 06.05.2024թ թիվ 258 որոշում, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 20022014-06-0044 վկայական</p>		
<p><b>4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ</b></p>		
<p>Կադաստրային ծածկագիրը՝ 06-027-0072-0017 Մակերեսի չափը (հա)՝ 0.11977 Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>		
<p><b>ՎԿԱՅԱԿԱՆ N 15052024-06-0047, գաղտնաբառ՝ XRF5RBA4AFBY</b></p>		
<p>Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի <a href="http://www.e-cadastre.am">www.e-cadastre.am</a> կայքէջի միջոցով</p>		
<p>Էջ 1/2</p>		

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սուրեն Սարգսյան  
 Ջբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

**ՎԿԱՅԱՎԱՆ N 15052024-06-0047, գաղտնաբառ՝ XRFSRBAAAFBY**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով


Էջ 2/2



Կադաստրի կոմիտե

## Հավելված 2 Ճարտարապետահատակագծային առաջադրանք

**Ձև N 1-2**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՒԻՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԴԱՄԱՅՆՔ**

**ՆԱԽԱԳՏՄԱՆ ԹՈՒՐՆԱՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱԴԵՍԱԳԱՏԱԿԱԳՏԱՅԻՆ ՍՈՍՏԱԴՐՆԱՔ)**

**N 38/24 02 օգոստոս 2024թ.**

Օբյեկտ	<b>Նոր կառուցվող կրթահամալիր, կառուցում 4-րդ աստիճանի, 4-րդ աստիճանի</b> <small>(օբյեկտի անվանումը, կարտ. ցուց. վերահատուցում, բաժնիցանք, վերականգնում, գործարկման նշանակության փոփոխություն, հանրոց բերողումը, հզորությունը, օրնամալույթի աստիճանը (կառուցման))</small>
աշխատանքային նախագիծ <small>(նախագծման փուլերը և այլն)</small>	Նախագծային փաստաթղթերի մշակման համար
Գտնվելու վայրը	<b>ԳՂ, Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, ք. Գարգար, Լեւոնտրոնական ՏՕ/1</b> <small>(մարզի, համայնքի, տարածքի անվանումները, շենքի համարը, հողատիրոջ ծածկագիրը)</small>
Կառուցապատող	<b>ՀԱՏԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՑԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՅՈՒԼԱԳՐԱԿ (ԴՏԶԳ) , ք. Երևան, Ուլնեցու 31,</b> <small>(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ընտանիքի վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)</small>
Առաջադրանքի տրամադրման հիմնը	<b>Խաչատուրի դիմում և թիվ 15052024-06-0047 վկայական</b> <small>(Քառուցապատման նպատակով Խաչատուրի Դանիելյանի օրնամալույթի աստիճանը կառուցվող հողամասի տրամադրման, անվանի քույր փոփոխման իրավունքը Խաչատուրի անիմալույթի փաստաթղթերը)</small>
Առաջադրանքի գործողության ժամկետը	<small>(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)</small>

**ՆԱԽԱԳՏՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կնի ներկայացվող ամֆոտի սխեմայով՝ Մ 1:500)**

1. Հողամասը գտնվում է	<b>Շենքերի</b> <small>(հողամասի դիրքը քաղաքացիական միջավայրում, որն նպատակային և գործառնական նշանակությունը)</small>
2. (*) Հողամասի չափերը	<b>0 Տիար</b> <small>(հողամասի սահմանները՝ կողմնառային նշարկումը, մակերեսը (մա))</small>
3. Հողամասի անկա վիճակը	<b>Ազատ</b> <small>(օբյեկտի թուլագիծը, շենքեր (այդ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը (օտարադրումը, նշանակությունը, ֆակտայությունը, շինարարական կյանքը և այլն), անսպասարկելի, օբյեկտները և այլն)</small>
4. (*) Ջրանաղորտային պայմանները	<b>Ստորակային ճանապարհ</b> <small>(ճանապարհների անկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտքումնեղ և այլն)</small>
5. Ինժեներական ցանցեր և արտադրումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	<b>Չկան</b> <small>(նախագծվող հողամասի վրա կնի տարածքի անցողի ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)</small>
6. (*) Կնի հողամասեր	<b>Շենքերի կառուցապատման</b> <small>(կնի հողագրաբերումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված ստեմալի)</small>
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանման գոտիներ)	<b>Չկան</b> <small>(ուշարձանի անվանումը, կառավարմանը և այլն)</small>
8. (*) Չտանագծային սահմանափակումներ	<b>Չկան</b> <small>(տնայնացում գրծող արտադրական, պաշտպանող զինվորների, ինժեներատնտեսարարային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սեղմարկները)</small>

**ՆԱԽԱԳՏԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ**

**(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կնի ներկայացվող ամֆոտի սխեմայով՝ Մ 1:500)**

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	<b>Կրթահամալիրը, որը քաղկազմ է 200 միջնակարգ դպրոցի աշակերտի համար և 80 մանկապարտեզի երեխայի համար:</b> <small>(նշվելով Գաղտնի Կառուցվածքային օրնամալույթի և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի աստիճանները, անկա քաղաքացիական ծագողային փաստաթղթերի դրույթները կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմավորվող) քաղաքացիական միջնակարգ պայմանները, անաչափություններ մակատնետ մնացորդներ, սկզբներ, արտաքին դրույթ, պատմականների համաձայնությունների և գրանցված լուծումների վերաբերյալ)</small>
9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կառուր գծից (մետր)	
9.2. (*) հեռավորությունը Խաչատուրի հողամասերից (օբյեկտներից) (մետր)	<b>Չստ էսրիզային նախագծի</b>
9.3. Թուլայրբի քաղաքային (մետր)	
9.4. Կառուցապատման խտություն	





### Հավելված 3, Տեղեկանք շինադրի և հողային հանույթի հեռացման



## Հավելված 4, Ավագանու որոշում



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
 ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**«18» հուլիսի 2024 թվականի N 30-Ա**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՐԳԱՌ  
 ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՈՒՖ ՕԶԱԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԱՐԳԱՌ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ  
 ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 17.06.2024-ի «Ուֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կողմից Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային ընկերկման արձանագրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ նախնական համաձայնություն «Ուֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ իրականացմանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ /8/	Դեմ /0/	Չձեռնած /0/	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ	<i>[Signature]</i>	-	-	-
Օհանյան Ռուսլան	<i>[Signature]</i>	-	-	-
Սարգսյան Արթուր	<i>[Signature]</i>	-	-	-
Նարանդյան Նարեկ	<i>[Signature]</i>	-	-	-
Մուրադյան Դավիթ	<i>[Signature]</i>	-	-	-
Պատափյան Գոհար	<i>[Signature]</i>	-	-	-
Այվազյան Սեդրուհ	<i>[Signature]</i>	-	-	-
Գրիգորյան Արսեն	<i>[Signature]</i>	-	-	-
Այվազյան Կրոյր	-	-	-	բացակա
Գևորգյան Համլետ	-	-	-	բացակա
Բալաչյան Կարսենիկ	-	-	-	բացակա
Արդյան Տիգրան	-	-	-	բացակա
Տոնոյան Արզյոմ	-	-	-	բացակա
Գրիգորյան Թամարա	-	-	-	բացակա
Սարգսյան Արիկ	-	-	-	բացակա



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *[Signature]* /ԽԱՉԻԿ ՎԱՐԳԱՆՅԱՆ/

## Հավելված 5, Արձանագրություն և մասնակիցների ցանկ

### Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

19.06.2024.

«ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից Գարգառ բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ/ I փուլ /:

2024 թվականի հունիսի 18-ին , ժամը 14:30-ին ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից Գարգառ բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումը:/ I փուլ /

Հանրային քննարկումներին մասնակցում էին Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Ռուբեն Վարդանյանը, Կառուցապատող կազմակերպության ճարտարագետ Արթուր Ստեփանյանը:

Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը հանդես եկավ բացման խոսքով և նշեց, որ իրականացվում են «ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից Գարգառ բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումները:

Հաջորդիվ ելույթ ունեցավ ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Ռուբեն Վարդանյանը: Նա նշեց, որ ՀՀ տարածքային հիմնադրամը հանդիսանում է պատվիրատու կազմակերպությունը տվյալ գործունեության և այսօրվա քննարկումը կազմակերպված է ՇՄԱԳ օրենքի շրջանակներում : Քանի որ ըստ օրենքի 1500քմ -ից մեծ կառուցապատումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության , ուստի դրա շրջանակներում իրականացնում են առաջին հանրային քննարկումները: Ըստ օրենքի գործընթացը ենթադրում է երկու հանրային լսում, հիմա իրականացվում է առաջինը, երկրորդը կիրականացվի , երբ որ ամբողջական փաթեթը փաստաթղթային մուտք կարվի նախարարություններ և գերատեսչություններով կպտտվի, արդեն վերջնական պատրաստ լինելուն պես շրջակա միջավայրի նախարարության փորձագետի մասնակցությամբ կկազմակերպվի ևս մեկ հանրային քննարկում: Նա նշեց, որ գործունեությունը ունենալու է չնչին ազդեցություն շրջակա միջավայրի վրա, բայց կրելու է կարճ քնույթ և լուրջ, քանի որ պայմանավորված է լինելու շինաշխատանքներով, այսինքն կարող է աղմուկ լինել , փոշին մի քիչ ավել լինել, դրա համար ՇՄԱԳ ՊՈԱԿ-ի

շրջանակներում կներկայացվի մեղմացնող միջոցառումները, օրինակ՝ աղմկուտ գործունեությունը պետք է իրականացվի ցերեկային ժամերին, եթե դպրոց է կողքը լինելու, այնպես կազմակերպվի, որ դասապրոցեսին չխանգարի, եթե փոշին շատ կլինի, կիրականացվի ջրցանում: Նա շեշտեց, որ իրենց կողմից լինելու է խիստ հսկողություն, այսինքն ծրագրերին լինելու է վերահսկող ինժեներ, բնապահապանության սոցիալական բաժինը հաճախակի այցեր է կատարելու և կապալառու կազմակերպությունը, ով իրականացնելու է շինարարական աշխատանքները, պարտավորվելու է աշխատանքները իրականացնել ՀՀ-ում գործող օրենսդրանորմատիվային բոլոր կարգավորումների հիման վրա:

Հաջորդիվ ելույթ ունեցավ Կառուցապատող կազմակերպության ճարտարագետ Արթուր Ստեփանյանը: Նա ներկայացրեց հետևյալի մասին, որ Ծրագիրն իրականացվում է թվով 300 դպրոցների (կրթահամալիր) կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ՀՀ կառավարության ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է կառուցել 200 տեղանոց դպրոց + 80 տեղանոց սաների համար կրթահամալիր տիպարային նախագծի հիման վրա՝ տեղակապման միջոցով: Շենքը բաղկացած է երկհարկանի դպրոցից, ինչպես նաև երկհարկանի մանկապարտեզից: Մասնաշենքերն իրար միացված են լինելու դեֆորմացիոն կարերով: Մանկապարտեզի համար նախատեսված է ամբարձիչ: Դպրոցում լինելու է վերելակ: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսվելու են թեքահարթակներ: Առաջին հարկում նախատեսվում են դասասենյակներ, պարետի և վարչական սենյակներ և բուֆետ: Առաջին հարկում է նաև հանդիսությունների սրահը: Երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի սենյակ, ռազմագիտության ուղրտատեխնիկայի սենյակ, ռաուցչանոց և այլն: դասասենյակ, Դասարանները նախատեսված են 12 աշակերտի համար: Մանկապարտեզի շենքը նախատեսվում է 4 խմբի համար տեղանոց: 20 Նկուղային հարկ է նախատեսված 21.6x20.4մ, որն անհրաժեշտության դեպքում կօգտագործվի որպես թաքստոց: Բոլոր հակերն իրար հետ կապված են աստիճաններով և ունեն հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար: Նկուղային հարկում է գրադարանը, բուժ կետ, սանհանգուցներ, ջրի ռեզերվուար և այլն: Դպրոցի տարածքը բարեկարգվելու է, առկա է 100մ երկարությամբ վազքուղի, 24 X 16 մ բացօդյա ցանկապատված մարզադաշտ, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք: Նախատեսվում է նաև դպրոցի ցանկապատում: Առկա են քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ: Քիմիայի լաբորատորիայում լինելու է քարշիչ պահարան, ինչպես նաև լաբորատորիայում նախատեսվելու են ջրի ծորակներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճաև, կկիրառվեն մեղմացնող միջոցառումներ, օդի աղտոտման համար պարբերաբար կջրջանվի փոշոտ շինհրապարակը, շինարարության ընթացքում հնարավոր է աղմուկ և թրթռումներ: Հարակից տների եւ շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, բուսականությունը և ծառերը կպաշտպանվեն, հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 1404-Ն որոշմամբ (02.11.2017) սահմանված պահանջների համաձայն:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Գարգառ բնակավայրի բնակիչ Կարեն Զալինյանը հարցրեց, թե արդյոք հնարավոր չէր նախագծով ֆոտովոլտային կայանը տեղադրվեր դպրոցի տանիքին՝ տարածք տնտեսելու համար: Արթուր Ստեփանյանը պատասխանեց, որ նաև որոշակի նախագծային փոփոխության հետևանքով նաև այդ տարբերակն է հնարավոր:

Համայնքի ղեկավարը հարցրեց, թե երբ կավարտվեն աշխատանքները, պատասխան հնչեց, որ ամբողջական փափեթը պատրաստ լինելուն պես, մեկնարկից հաշված՝ մոտ մեկ տարի ու կես հետո : Համայնքի ղեկավարը նշեց նաև, որ համայնքը տարածքի նվիրատվության գործընթացն իրականացնել է, մնացել է կառավարության որոշումը, որպեսզի տարածքները ընդհարացնեն և ունենան մեկ վկայական :

Գարգառ գյուղի մանկապարտեզի տնօրեն Լիլյա Շահինյանը խոսեց այն մասին որ երեխաների քնի ժամը 1:30-ից 15:00-ն է : Քննարկվեց, որ այդ ժամերին թրթռացումներ, հարվածային աշխատանքներ չեն իրականացվի:

Հանրային քննարկմանը ներկա անձինք միմյանց շնորհակալություն հայտնեցին հանրային քննարկման կազմակերպման, իրականացման և մասնակցության համար:

Վարոր՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ

Աշխատակազմի քարտուղար



ԽԱԶԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հանրային բնարկում

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (I)

ՀՀ Լոռու մարզի կրթահամալիրի կառուցում

Մասնակիցների ցանկ

N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Հեռախոս/ email	Ստորագր.
1	Մարտիրոսյան Բաղդատ	բնակիչ	093-053130	
2	Նալբանդյան Նարեկ	բնակիչ	055-56-58-59	
3	Զաքարյան Գրիգոր	բնակիչ	0-94253225	
4	Մարտիրոսյան Կոնստանտին	համայնքապետի տեղակալ	093 752441	
5	Բաղդատյան Գրիգոր	ԽՍՀ-ՕԳԱԽ	033315305	
6	Էդուարդ Ազատյան	Բաժնի Թեմա	095390090	
7	Մարտիրոսյան Գրիգոր	բնակիչ	098 552 745	


N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Հեռախոս/ email	Ստորագր.
8	Գրիգորյան Կարեն	կառ. ղեկավար	0771415-36	
9	Շահինյան Բաղդատյան	շինարար	098.544267	
10	Մարտիրոսյան Կարեն	շինարար	098.98-25-98	
11	Մարտիրոսյան Գրիգոր	Սանկարային ԿԲ	094-625621	
12	Մարտիրոսյան Կարեն	Սանկարային ԿԲ	094 05 9254	
13	Մարտիրոսյան Նուբար	Սանկարային ԿԲ	077459079	
14	Զեյնաբյան 355ա	բնակիչ	093 5108 77	
15	Մարտիրոսյան Մարտիրոս	բնակիչ	098-59-49-48	
16	Մարտիրոսյան Գրիգոր	համայնքի ԹԵՄ	093-74-76-98	
17	Մարտիրոսյան Զեյնաբ	բնակիչ	094 8378 96	
18	Մարտիրոսյան Նուբար	բնակիչ	094 8969 09	

N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Հեռախոս/ email	Ստորագր.
19	Նախնայան Անթրեան	Գրու. համայնքի սի. ղեկավ.	097 74 76 92	Վ. Բալյան
20	Նախնայան Արմեն	Էլ. ծախս	093-43-20-15	Ա. Բալյան
21	Նախնայան Զոհրաբ	Էլ. ծախս	093 910856	Զ. Բալյան
22	Ռաբին Գրիգորյան	Ի. Տ. ղ. ք. ղեկավ.	099 43 28 26	Գ. Բալյան
23	Պապիկ Կարամյան	Ի. Տ. ղ. ք. ղեկավ.	077 37 37 05	Դ. Բալյան
24	Պապիկ Կարամյան	Կոմ. ք. ղեկավ.	077 34 71 21	Կ. Բալյան



## Հավելված 6 Կադաստրային քարտեզ


Լոռու մարզ  
Գարգառ համայնք  
Հատված կադաստրային քարտեզից  
Կադաստրային ծածկագիր՝ 06-027-0072-0017  
Մասշտաբ 1: 2000



սպասարկման գրասենյակ

Կ.Տ

Լոռու մարզ  
 Գարգառ համայնք  
 Հատված կադաստրային քարտեզից  
 Կադաստրային ծածկագիր՝ 06-027-0072-0017  
 Մասշտաբ 1: 500












## Հավելված 9. Գլխավոր հատակագիծ



## Հավելված 10. Պետական տուրքի անդորրագիր

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ  
Վ. Սարգսյան 10  
Հեռախոս 060 757000, 011 757000, 010 529593  
Ֆաքս՝ +(374 10) 52 95 91  
Էլ. փոստ՝ info@armswissbank.am

Տպված է՝ 09/10/2024 15:23 (UTC+04:00)

### Բյուջետային փոխանցում N 002145

Ամսաթիվ	09/10/2024	Նույնացուցիչ	5864037b-ab9f-402c-8473-6ae38c2850b6
Հաշիվ	2500010665890100	Գումար	
Շահառուի հաշիվ	900005000196	AMD	300,000.00
Վճարողի անվանում	«ՈՒՖ-ՕՏԱԽ» ՍՊԸ		
Վճարողի բանկ	«Արմավիսբանկ» ՓԲԸ		
ՀՎՀՀ	00456403		
Տարածաշրջանի/ՅՏ կոդ	23		
Շահառուի անվանում	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն		
Ինքնագրադ անձ	Ոչ		
Գումարը բառերով	Երեք հարյուր հազար դրամ		
Նպատակ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության վճար/ՀՀ Լոռու մարզի Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցում		
Ստորագրող	Արման Ասրյան		
Ստորագրության կարգ	I, II		
Ամսաթիվ	09/10/2024 15:21:53.570		
Սարքի անվանում	Digipass GO ընտանիքի սարք		
Սարքի սերիալ N	2768558922		
Ստորագրություն	737178		

Կատարված է



## Հավելված 11, Տեղանքի կոորդինատներ

